



Տեղեկանք Ընտրատարածքների վերագծման մասին

Լուս Անջելես քաունթիի պատմության մեջ առաջին անգամ Լուս Անջելես քաունթիի Ընտրատարածքների վերագծման քաղաքացիների անկախ հանձնաժողովը (LU քաունթիի CRC) կվերագծի հոգաբարձական շրջանների սահմաններն առաջիկա 10 տարվա համար:

Ի՞նչ պետք է գիտենալ

Ինչպե՞ս է շրջանների վերագծման այս գործընթացը տարբեր նախկինում արվածից

Նախկինում, վերագծված շրջանների սահմանների վերջնական տարբերակներն ընդունելու հարցում վերջին խոսքը Հոգաբարձուների խորհրդին էր: Այսօր, LU քաունթիի CRC-ն անկախ է խորհրդի ազդեցությունից և արտացոլում է քաունթիի ժողովրդագրական բազմազանությունը:

Շրջանների վերագծման ընդհանուր պատկերը

Մեր գործն է՝ սահմանել հոգաբարձական շրջաններն այնպես, որ դրանք բնակչության թվով լինեն մոտավորապես հավասար, յուրաքանչյուր շրջանում մոտ 2 միլիոն, հենվելով ԱՄՆ Մարդահամարի տվյալների վրա: Այլ նկատառումներից են ռասայական ու էթնիկական խնդիրներում արդարությունը, քաղաքները, թաղերն ու հետաքրքրություն ներկայացնող համայնքները չմասնատելը և հավաք շրջաններ ունենալը:

Ինչու է շրջանների վերագծումը կարևոր

Տեղական մակարդակով, շրջանների պարբերական վերագծումը կարող է օգնել.


- Ապահովել, որ մեր քաունթիի բազմազան բնակչությունն ու համայնքները հնարավորություն ունենան լսելի դարձնելու իրենց ձայնը
- Ընտրողներին հնարավորություն տալ ընտրել իրենց նախընտրած ներկայացուցիչներին, և հոգաբարձական շրջանները չգծել այնպես, որ դրանք տարրալուծեն արդար հնարավորությունները
- Ապահովել Հոգաբարձուների արձագանքը բնակչության նախընտրություններին ու կարիքներին, հետևյալի միջոցով.
 - Հանրային քաղաքականություն՝ ուղղված կյանքի բարելավմանը
 - Հանրային ծառայություններ ու ռեսուրսներ (օրինակ՝ հանրային առողջության ու բժշկական կենտրոններ, սոցիալական ծառայություններ զբոսայգիներ, շերիֆ, քաղաքային ծառայություններ ոչ-ինկորպորացված շրջաններին ու պայմանագրային քաղաքներին, և շատ ավելի հարցեր)

Մենք ցանկանում ենք, որ գործընթացը լինի թափանցիկ ու ներառական: Լսելի դարձրեք Ձեր ձայնը.

- Հաճախելով մեր պարբերական հանդիպումներին
- Ձեր կարծիքը ներկայացնելով մեր Հանրային ֆորումներում ու Հանրային լուսմներին
- Գրավոր հանրային մեկնաբանություններ ներկայացնելով
- Պատրաստելով քարտեզներ ու ներկայացնելով դրանք բնակարկման
- Ուրիշներին տեղեկացնելով շրջանների վերագծման մասին

Գրանցվե՛ք: Եղեք ակտիվ:

<https://redistricting.lacounty.gov/>



Ով ենք մենք

Համանախագահ Դանիել Մայեդա
Համանախագահ Քերոլին Ուիլիամս

Հանձնաժողովի անդամ Ջին Ֆրենքլին
Հանձնաժողովի անդամ Դեյվիդ Հոլցման
Հանձնաժողովի անդամ Մերի Քեննի
Հանձնաժողովի անդամ Մարք Մենդոզա
Հանձնաժողովի անդամ Ապոլոնիո Մորալես
Հանձնաժողովի անդամ Նելսոն Օբրեգոն
Հանձնաժողովի անդամ Փրիսսիլա Օրփինելա-Սեգուրա
Հանձնաժողովի անդամ Հեյլիգ Սոթո
Հանձնաժողովի անդամ Սայրա Սոթո
Հանձնաժողովի անդամ Բրայան Սթեյտեր
Հանձնաժողովի անդամ Ջոն Վենթո
Հանձնաժողովի անդամ Դորինա Ուոնգ

